uTravel ինտերնետ ռոումինգում փաթեթների թողարկման շրջանակներում խաղարկության իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. uTravel ինտերնետ ռոումինգում փաթեթի թողարկման շրջանակներում խաղարկության (այսուհետ՝ Խաղարկության) իրականացման սույն պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ) սահմանվում են Խաղարկության անցկացման կարգը, պայմանները, սահմանափակումները:

1.2. Մասնակցելով Խաղարկությանը՝ Դուք հաստատում եք, որ ծանոթացել եք Պայմաններին և համաձայն եք դրանց:

1.3. Խաղարկությունը համարվում է մարքեթինքային միջոցառում:

1.4. Խաղարկությունն իրականացվում է «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.5. Խաղարկությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

2. Խաղարկության մասնակիցներ

2.1. Խաղարկությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող, 18 տարին լրացած այն անձինք, որոնք կակտիվացնեն **uTravel 1ԳԲ 1990 դրամ արժեքով ինտերնետ ռոումինգում փաթեթը** (այսուհետ՝ Փաթեթ):

2.2. Կազմակերպչի աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամները չեն կարող մասնակցել Խաղարկությանը:

3. Խաղարկության անցկացման կարգը

3.1. Խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է 2024 թվականի հուլիսի 4-ից 2024 թվականի սեպտեմբերի 4-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածում ակտիվացնել Փաթեթը: Նույն հեռախոսահամարով Խաղարկությանը հնարավոր է մասնակցել **միայն 1 անգամ**:

3.2. Փաթեթն ակտիվացրած մասնակցին՝ ակտիվացումից հետո 2 շաբաթվա ընթացքում կուղարկվի SMS հաղորդագրություն, որտեղ կնշվի քայլերի հաջորդականությունը, որոնց կատարման արդյունքում մասնակիցը կստանա իր անհատական կոդը:

3.3. Անհատական կոդը կորցնելու դեպքում, մինչև Խաղարկության ավարտը, հնարավոր է անհատական կոդը կրկին ստանալ՝ կատարելով Պայմանների 3.2-րդ կետում նշված SMS հաղորդագրությամբ սահմանված քայլերը:

3.4. Խաղարկության մասնակիցներին, Խաղարկության արդյունքների ամփոփման օրվա վերաբերյալ, կուղարկվի լրացուցիչ SMS հաղորդագրություն: Համապատասխան տեղեկությունը կտեղադրվի նաև Կազմակերպչի պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում:

3.5. Խաղարկության հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով՝ Random.org առցանց հարթակի միջոցով:

3.6. Հաղթողների ընդհանուր թիվը սահմանվում է 300 հոգի:

3.7. Խաղարկության արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներին կուղարկվի SMS հաղորդագրություն՝ վերջիններիս հաղթող ճանաչված լինելու, նվերը ստանալու վայրի և ժամանակահատվածի վերաբերյալ:

3.8. Խաղարկության արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցները իրենց նվերները ստանալու համար պետք է անձամբ մոտենան Կազմակերպչի՝ Հյուսիսային պողոտա 1/2 հասցեում գտնվող հաճախորդների սպասարկման գրասենյակ:

3.9. Հաղթող ճանաչված մասնակցի կողմից պետք է ներկայացվի իր հեռախոսահամարին ստացված անհատական կոդը և անձը հաստատող փաստաթուղթ:

3.10. Հաղթող ճանաչված մասնակցի կողմից նվերն անձամբ ստանալու անհնարինության դեպքում, նվերը կարող է ստանալ վերջինիս կողմից պատշաճ լիազորված անձը՝ օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագրով և անձը հաստատող փաստաթղթով:

3.11. Նվերը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:

3.12. Կազմակերպչին իրավունք է վերապահվում փոփոխել Խաղարկության Պայմանները՝ հաշվի առնելով ստեղծված իրադարձությունները՝ դրա մասին նախապես տեղեկացնելով իր պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում:

4. Խաղարկության անցկացման ժամկետները

4.1. Խաղարկությունն անց է կացվելու **2024 թվականի հուլիսի 4-ից 2024 թվականի սեպտեմբերի 4-ը (ներառյալ)** ընկած ժամանակահատվածում:

4.2. Խաղարկության արդյունքների ամփոփման ժամկետների վերաբերյալ տեղեկությունը կտրամադրվի Պայմանների 3.4-րդ կետով սահմանված կարգով:

5. Նվերների ցանկը

5.1. Նվերների ցանկը հետևյալն է.

Ապրանքատեսակ	Քանակ
Ճամփորդական բարձիկ	295
JBL T225 TWS ականջակալ (սպիտակ)	4
JBL T225 TWS ականջակալ (մոխրագույն)	1
	300

6. Կազմակերպչի տվյալները

«Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերություն,
գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթ Անհաղթի փող., շ. 8/4,
պաշտոնական կայքէջ՝ www.ucom.am
պաշտոնական սոցիալական էջեր՝
https://www.facebook.com/UcomArmenia
https://www.instagram.com/ucom_official
հեռախոսահամար՝ +374 (11) 444 444